ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ[1]

Հավելվածներում ներկայացված են հասարակական կյանքի մի շարք բնագավառներում հայ արժանապատիվ մարդու վարքագիծը բնորոշող պատմական աղբյուրներ։

Հավելված 1

1714թ. Գանձասարում գումարված գաղտնի ժողովի որոշումից (Է.Դանիելյան, Գանձասարի պատմություն, Երևան, 2005, էջ 222-223)

Արտաքին ու ներքին թշնամիներին ավելի արդյունավետ դիմակայելու և հայության միասնականությունն ամրապնդելու նպատակով Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի և Արցախի հինգ գավառների (Խամսայի մելիքությունների) մելիքների նախաձեռնությամբ 1714թ. գաղտնի ժողով գումարվեց Գանձասարի վանքում։ Ժողովին մասնակցում էին նաև մելիքազուններ, զորավարներ, եպիսկոպոսներ, քահանաներ և գյուղապետեր։ Ժողովի ավարտին միաձայն ընդունվեց որոշում՝ բաղկացած 23 կանոններից, որոնցից առաջին տասը վերաբերում էին եկեղեցական աստիճանավորների փոխհարաբերություններին, իսկ վերջին տասներեքը (ԺԱ-ԻԳ)՝ աշխարհական իշխանավորների ու զինվորականների փոխհարաբերություններին։

ԺԱ. Յուրաքանչյուր մելիք պարտավոր է գահերեց ճանաչել Ջալալյան[2] մելիքներին և թե՛ հայտնի և թե՛ գաղտնի ժողովատեղի ընդունել Գանձասարի վանքը։ Ամեն զորավար հնազանդելու է իր մելիքի հրամանին, ամեն զնդապետ՝ իր զորավարին և ամեն զորական՝ իր զնդապետին նն.։

ԺԲ. Յուրաքանչյուր մելիք պարտավորված կլինի պահել Վ (3000) կանոնավոր զորք, փորձառու զորավար, հավատարիմ սուրհանդակներ և պատրաստություններ։

ԺԳ. Յուրաքանչյուր մելիք պարտավոր է արթուն հսկել իր սահմանները, և եթե վտանգ նշմարի թշնամիների կողմից, անմիջապես պետք է այդ մասին հաղորդի մյուսներին։

ԺԴ. Յուրաքանչյուր մելիք եթե հանդգնի իր գավառի որոշյալ սահմաններից դուրս գալ և ուրիշ մելիքների իրավունքը բռնի հափշտակել՝ կպատժվի մյուսների (մելիքների) ժողովի որոշած պատժով և ԺՌ (10.000) թուման տուգանք կվճարի մելիքների (ընդհանուր) գանձարանին, իսկ վնասված մելիքի վնասը անջատաբար կվճարի։

ԺԵ. Ամեն ոք (մելիք) պարտավոր է ամրապնդած պահպանել ներքին սիրո և

[1] Պատրաստեց Գևորգ Յազըճյանը։

[2] Նկատի ունեն Խաչենի տեր Հասան-Ջալալյան իշխանատոհմը։

միաբանության կապը՝ միաձույլ զորությամբ կռվելու համար արտաքին հակառակորդների դեմ:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմները կմղվեն բոլոր մելիքների, զորավարների և գնդապետների որոշումից հետո: Անակնկալ կամ հանկարծակի դեպքերը բացառություն կլինեն:

ԺԷ. Հայրենիքի և կրոնի դեմ դավաճանություն և ծանր հանցանք գործողը, լինի մելիք, զինվորական կամ ժողովրդից որևէ մեկը, կպատժվի կրոնական և մելիքական խառն ժողովի որոշած պատժով:

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանավորների հետ խնամություն հաստատել և ո՛չ էլ երկպառակությամբ նրանց կողմը հակվել:

ԺԹ. Եթե օժանդակության համար մի հզոր տերության դիմելու հարկն զգալի լինի՝ կրոնական և աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները և պահանջները:

Ի. Յուրաքանչյուր մելիք պարտավոր է Հայրենիքի ընդհանուր շահերը իր գավառի շահերից վեր դասել և իր գավառի շահերը՝ իր անձնական շահերից և օգուտներից:

ԻԱ. Մելիքներից ով կհանդգնի իր օրինավոր կնոջ կողքին ուրիշ, ապօրինի կին պահել, հասարակության վատ օրինակ տալ, գայթակղություն հարուցել և հակառակվել Եկեղեցու կանոններին՝ այնպիսին անխնա կպատժվի արդար վրեժխնդրությամբ:

ԻԲ. Ամեն մելիք պարտավոր է պատերազմի ժամանակ իր զորքերի գլխին գտնվել և իր զորքին և զորավարին քաջասրտությամբ խրախուսել:

ԻԳ. Մեզանից ով կհանդգնի սույն կանոններին հակառակ գործել, Հայրենիքի և կրոնի թշնամու կողմն անցնել, նրա հետ միաբանելով Հայրենիքի հանգստությունը վրդովել, հայը հայի դեմ թշնամացնել և արյունահեղություն պատճառել՝ այնպիսին կպատժվի մահվան պատժով, մյուս մելիքները կգրավեն նրա բերդը և ինչքը՝ մինչև նոր տնօրինում:

Հավելված 2

Երզնկայի եղբայրական միաբանության կանոնադրությունը (Լ.Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280թ.), Բանբեր Մատենադարանի, Երևան, 1962, N6)

Հիմնադրույթներ և կանոններ այն եղբայրների միաբանության, ովքեր Երզնկա կոչվող մայր քաղաքում՝ ՉԻԹ (1280) թվականին աստվածային սիրով միաբանվեցին իրար նկատմամբ եղբայրությամբ։ Այստեղ էր գտնվում Գրիգոր Սանահնեցի ծերունի վարդապետը, որը եղբայրության գլխավոր նշանակվեց, իսկ ես՝ Հովհաննես Երզնկացի նվաստ վարդապետս, Սուրբ հոգու առաջնորդությամբ գրեցի սույն եղբայրության հիմնադրույթներն ու խրատները և այն օգուտները, որոնք գալիս են դրանցից։

Աստված, որն Իր խոսքով գոյացրեց բոլոր արարածներին և Իր խոսքին հոգի և կյանք տվեց, Իր իմաստուն խոսքով մեր հոգին զարդարեց, որովհետև ինչպես մարմինը հացով է սնվում, այնպես էլ հոգին խոսքով է կայանում։

Արդ, Քրիստոսի հոգեպնդիչ խոսքը մեզ ուսուցանում է, որ մարդու վարքն ունի երկու դուռ և ճանապարհ, որոնց մարդիկ ընտրում են և այդ ճանապարհներով գնում կենցաղում. դեպի կյանք տանողի դուռը նեղ է, նրա ճանապարհը՝ անձուկ, և քչերն են, որ նրա մեջ են մտնում, իսկ դեպի կորուստ տանող ճանապարհը լայն է և ընդարձակ, և շատեր են դրանով գնում։

Արդ, նեղ և անձուկ ճանապարհ նշանակում է առաքինություն և բարեգործություն. որով հեշտասերներն ու մեղքերով մոլորվածները չեն կարող գնալ, և աշխարհում քչերն են, ովքեր հոժարական սիրով կգնան դրանով։ Իսկ լայն և ընդարձակ ճանապարհ նշանակում է մեղքեր և չար գործեր, որին մեղքերն ու աշխարհը սիրող մարդիկ սիրում են և հոժարում դրանով գնալ։ Արդ, այս երկու ճանապարհներն երկու առաջնորդներ են, որ մարդկանց կանչում են ընթանալու իրենց հետ։ Բարի ճանապարհի առաջնորդը Սուրբ հոգին է, ինչպես Դավիթ մարգարեն է հայցում՝ «Քո բարի հոգին թող ինձ ճիշտ առաջնորդի երկրում»։ Իսկ չար ճանապարհի առաջնորդը սատանան է, որի մասին հավատի վեմ Պետրոսն[1] ասում է՝ «Ձեր թշնամի սատանան առյուծի նման գոռում է և կուլ տալու ինչ-որ բան է ուզում»։

Հետևաբար, թող Սուրբ հոգին, Հոր և Միածին որդու հետ միասին մեր եղբայրության առաջնորդը լինի և բարի ճանապարհով մեզ ճիշտ առաջնորդի երկրում դեպի արքունական պողոտան՝ առանց աջ կամ ձախ խոտորելու, որպեսզի այս երկուսի զենքերից չվիրավորվենք, այլ իբրև գետի վրայի կամրջով ընթացողի՝ վերևից կամ ներքևից գետի մեջ չընկնենք։ Մարդը, օդի նման, իր բնույթով ժողովասեր է և չարի ու բարու ընդունակ. օրինակ, արեգակի ծագման ժամանակ օդը լուսավորում է, իսկ գիշերվա գալստով՝ սևանում է և խավարանում։ Այդպիսին է նաև մարդը. եթե նա աստվածային խոսքը, հոգևոր խրատները և Աստծո պատվիրանների լույսը հասկանա՝ կլուսավորվի և կպայծառանա, իսկ եթե հակում ունենա սատանայի ազդեցության ու մեղքերի նկատմամբ՝ կնսեմանա և կխավարի։ Եվ ինչ-

[1] Պետրոս առաքյալն է, որին Քրիստոսը «հավատի վեմ» էր որակել։

պես երկրի հողը, որտեղ մարդն ինչ սերմանի, այն էլ կպտղաբերի, այդպիսին է նաև մարդու հողեղեն բնությունը. ինչ սերմանեն, դա էլ կպտղաբերի. եթե փուշ՝ ապա մեղքեր, եթե ծաղիկ՝ ապա առաքինություն։ Հետևաբար, Աստծո պատվիրանների լույսը թող լուսավորի եղբայրությանս ոգուն և ամեն բարությունների ծաղիկներ թող բուսնեն նրանց բնության մեջ։

Բայց արժե իմանալ, թե եղբայրության քանի տեսակներ կան։

Առաջինը հետևյալն է. մեկ արարչի՝ տարրերի մեկ բնությունից ստեղծվածները եղբայր են կոչվում։ Դա ընդհանուր է և՛ բանականների, և՛ անբանների, և՛ կենդանիների, և՛ անկենդանների համար։

Երկրորդ եղբայրությունն այն է, որ մեկ ծնողներից են ծնվում։ Այսպիսի եղբայրությունը քիչ է։

Իսկ երրորդ եղբայրությունը, որը ճշմարիտ և հոգևոր եղբայրություն է, այն է, որ Աստծո հոգուց ծնվածներն ու մեկ ավազանում մկրտվածները միմյանց և Քրիստոսին եղբայր են ասում։ Նրանք երկնավոր Հոր որդիներն են, արքայության ժառանգորդները և Քրիստոսի ժառանգակիցները։ Սա միմիայն քրիստոնյաներին պարգևված շնորհք է, ովքեր կնքվում են Քրիստոսի անունով։

Իսկ, դուք, սրանցից բացի, ձեր միջև հաստատեցիք մի չորրորդ տեսակի եղբայրություն, որը գրավոր է և կանոնական դրույթներով, բարեսեր ժողովմամբ, ընկերակցությամբ և միաբանությամբ, մեկ հավատով և սիրով և երկնավոր ցանկությամբ։ Սա նոր բան չէ, այլ ինչ քրիստոնյաներին վայել գործ է՝ այն էլ ուսուցանում է։

Այս եղբայրության դրույթը քաղցր է, որովհետև ինչպես աստղերի բազմությունը երկինքն է զարդարում, այնպես էլ սիրով հավաքված եղբայրների բազմությունը պայծառացնում է Եկեղեցուն. և ինչպես միաբանված քաջամարտիկ զինվորների զորքերը հեշտությամբ կհաղթեն թշնամիներին, այնպես էլ քաջ հավատով և հավասար սիրով եղբայրների բազմությունը հեշտությամբ կհաղթի սատանային և մեղքերը սիրող դևերին սատանայի կողմից շարժման մեջ դրված մարդկանց։

Մեր եղբայրության դրույթները երեք գլուխներից են բաղկացած. առաջին՝ յուրաքանչյուրն անձամբ ինչպե՞ս է վարվում, երկրորդ՝ այս միաբանված եղբայրներն ի՞նչ օգուտ և շահ են տալիս միմյանց և նրանց միաբանության արդյունքը ո՞րն է, երրորդ՝ իրենց հասարակ կենցաղում՝ աշխարհում և բազմաթիվ ազգերի մեջ ինչպե՞ս են իմաստությամբ ընթանում որպես բարի օրինակ տեսնողներին և որպես փառք Քրիստոսի անվան։

Հետևաբար, ասում ենք, որ ամեն մարդ պետք է իրեն հասանելիքն ստանա։ Օրինակ, ինչպես արեգակը ծագում է բոլորի համար, բայց ում տեսանելիքն առողջ է, նա լուսավորվում է, նույնպես և աստվածային օրենքը ընդհանուր է ամբողջ աշխարհի համար, սակայն նա, ով սիրում է և գործում, նա օրինազարդ է և աստվածային լույսով պայծառացած։

Լսե՛ք, երիտասարդներ և դեռահաս պատանիներ, դուք, ովքեր միաբանվել եք այս եղբայրության մեջ.

ա. Սա ձեր առաջին օրենքն է՝ սիրեցե՛ք ձեր արարիչ Աստծուն և Նրա սիրո համար արհամարհեցե՛ք աշխարհի ամեն սերերը։

բ. Երկրորդ՝ պատվեցե՛ք ձեր ծնողներին՝ ձեր հորն ու մորը, ովքեր Աստծո

հետ ձեր ստեղծման պատճառն են, և նրանց ծերության ժամանակ խնամք տարե՛ք և նրանց հրամաններին հնազանդ եղե՛ք, որպեսզի նրանց օրհնությանն արժանի լինեք։

գ. Երրորդ՝ պատվեցե՛ք Աստծո քահանաներին որպես հոգևոր ծնողների, և ձեր քահանային – ում ծուխն եք – խոստովանեցե՛ք և ձեր վաստակից ու աշխատանքներից նրանց բաժին տվե՛ք, որպեսզի ձեզ համար Աստծո նրանց մատուցած աղոթքներն ընդունելի լինեն։

դ. Չորրորդ՝ ձեր անձերը սուրբ պահեցե՛ք մեղքերից և անարատ կուսությամբ մնացե՛ք մինչև արժանի լինեք օրհնության պսակն առնելու, որպեսզի ձեր անձերը Աստծո նվեր լինեն և գայլի նման մի սատանա ձեզ գիշատչի նման չպատառոտի։

ե. Հինգերորդ՝ օրհնության պսակն առնելուց և Աստծո կողմից պատշաճ համարված ձեր կողակցի հետ սուրբ ամուսնությամբ միավորվելուց հետո, ձեր անձերը սուրբ պահեցե՛ք օտար և պիղծ անկողնուց, այլապես կկորցնեք օրհնության պսակը, սատակեցնող անեծքների տակ կընկնեք և կզրկվեք քրիստոնեական անունից՝ շնության մեղքերի պատճառով շներ կոչվելով։

զ. Վեցերորդ՝ ամեն օր երեք անգամ աղոթեցե՛ք՝ օրը լուսանալիս, հաց ուտելու ժամին և երեկոյան՝ քնի ժամին։ Ամեն անգամին տղամարդը պետք է ծնրադրի ԺԲ (12) անգամ, իսկ կինը՝ Ի (20) անգամ։ Իսկ ով ավելին կարող է, թող այդպես անի իբրև արտահայտություն իր հոգու զորության և առ Աստված ունեցած սիրուն։

է. Շաբաթ օրը և կիրակին անպայման եկեղեցի գնացե՛ք, որպեսզի Ավետարանի ձայնը լսեք ու Քրիստոսի ձայնին արժանի լինեք և պատարագը տեսնելով՝ Քրիստոսին տեսնեք։

ը. Ամեն կիրակի շաբաթվա ձեր հանցանքները խոստովանե՛ք և մինչև Խ (40-րդ) օրը հաղորդվեցե՛ք, և ամեն տերունական տոնին եկեղեցում հավաքվե՛ք և տոնի խորհուրդը հասկացե՛ք, կիրակին աշխատանք կատարելուց սուրբ պահեցե՛ք։

թ. Ձեր բերանը - որն Աստծո անվան խոստովանողն է և հաղորդություն ընդունողը - սուրբ պահեցե՛ք հայհոյանքներից և ամեն տեսակ կեղտոտ խոսքերից, և Աստծո ստեղծած լեզուն սատանայի գործին մի՛ ծառայեցրեք։

ժ. Ձեր բոլոր զգայարաններն ամրացրե՛ք Աստծո երկյուղով. աչքերը՝ նայելու արատներից, ականջները՝ չար և մեղսալից խոսքերից, ձեռները՝ ուրիշին զրկելուց, գողանալուց և հարվածելուց, ոտները՝ մեղքի ճանապարհով ընթանալուց։ Փոխարենն արեք այսպես. աչքերով Աստծո գեղեցիկ արարածները տեսե՛ք, բերանով Արարչին օրհնեցե՛ք, ականջներով՝ Նրա պատվիրանները լսե՛ք, ձեռներով՝ աղոթեցե՛ք, աշխատանք կատարե՛ք, աղքատներին ողորմություն տալով բարեգործություն արե՛ք և սիրտը չար խորհուրդներից մաքրե՛ք։

Այս բոլորը ամեն մարդ իր անձի համար օրենք թող դարձնի և զգուշություն ցուցաբերի աստվածային հրամանների և սուրբ գրությունների նկատմամբ։

Բ[1]. Իսկ երկրորդը, որը եղբայրները պետք է անեն և Աստծո սիրո համար եղբայրասիրություն կատարեն, այս է.

ա. Քանի որ այս աշխարհը ծով է, իսկ մարդիկ նրանում ալեկոծվում են տար-

[1] Բնագրում բացակայում է Ա-ն։

բեր տեսակի գործերով, եթե այս եղբայրությունից որևէ մեկը մարդկանց փորձություններին մեջ ընկնի և բռնավորներից նեղություն կրի, բոլոր եղբայրները ջանք պետք է թափեն՝ նրան հասած վշտերից դուրս հանելու համար, քանի որ նա մեր եղբայրն է դարձել։ Քրիստոս ասել է. «Նեղության մեջ էի, և ինձ օգնության եկաք»։

բ. Եվ եթե որևէ մեկը մեղքերի փորձության մեջ ընկնելով սատանայի ձեռքը մատնվի, բոլոր եղբայրները աղոթքներով, բարի խրատներով և հորդորներով, ինչպես նաև սաստելով և ամեն հնարներով ընկածին պետք է ազատեն մեղքերին ծառայելուց և Քրիստոսի ընծայեն, նման նրա, ով գութ տածեց ավազակների ձեռքով ընկածի նկատմամբ[1]։

գ. Եվ եթե որևէ մեկը աղքատության մեջ ընկնի և մարմնապես թուլանա, մյուս եղբայրներն ըստ իրենց կարողության և ըստ իրենց ուժի պետք է օգնեն և աղքատ եղբորն օգնելով՝ նրան փոխ տան Աստծո, Որը հազարապատիկ կհատուցի այս աշխարհում և հանդերձյալում հավիտենական կյանք կպարգևի։

[դ]. Եվ եթե որևէ մեկը մարմնի տկարություն ունենա և հիվանդության ցավերի մեջ ընկնի, եղբայրությունից ամեն օր պետք է տեսության գնան, հիվանդին մխիթարեն և դեղով ու բժիշկով օգնության հասնեն, լսելու համար Քրիստոսի խոսքը, թե «Հիվանդ էի և տեսության եկաք ինձ»։

[ե]. Եվ եթե մեկը հասնի իր վախճանին և այս հանցավոր աշխարհից հեռանա, բոլոր եղբայրները նրա մարմինը պատվով պետք է գերեզման տանեն ինչպես դա վայել է, և հողը[2] հողին հանձնեն, և ամեն մեկ եղբայր մեկ օր պատարագ պետք է կատարել տա վախճանվածի համար։

Եվ սրանք դրույթներ են, որոնք եղբայրները պետք է պահպանեն միմյանց նկատմամբ, անկախ նրանից, թե եղբայրը մերձավոր է, թե հեռավոր. երկու դեպքում էլ նրանց պետք է իրենցից համարեն սիրով և հավատով։

Իսկ երրորդ գլուխն այն է, որ ուրիշներին էլ պետք է բարիք անեն՝ նրանք լինեն հեռավոր երկրներից եկած, թե իրենցից այլ երկիր գնացած. երկու դեպքում էլ պետք է օգնեն և աջակից լինեն։

Եթե մի վարդապետ գա այլ երկրից, եղբայրների գլխավորները պետք է նրան տեսության գնան և նրան պատվեն, օգտվեն նրա վարդապետական խոսքերից և նրա շուրջը հավաքվեն սուրբ գրքերի քարոզության ժամանակ։ Իսկ մեկնելու ժամանակ նրան ճանապարհ պետք է դնեն սիրով և նրա մարմնական կարիքների համար հոգևոր սերմանողին պետք է տան նյութական ապրանքներ՝ ըստ իրենց կարողության։ Այսպես պետք է անեն նաև եպիսկոպոսների, ինչպես նաև վանականների, աղոթարար եղբայրների և ասպնջական ճգնավորների հետ և բարեհամբույր[3] լինեն։

Մեր եղբայրները աշխարհում պետք է խաղաղասեր լինեն, բոլոր ազգերի մարդկանց պետք է սիրով ունկնդրեն և լսեն, բոլոր ազգերի իմաստուններին պետք է մեծարեն և նրանց իմաստությունից օգտվեն՝ առանց նրանց հակադրվելու։ Հեզ բարքով, հանդարտ բնավորությամբ և պարկեշտ կենցաղով՝ պետք է մնան երկրի տիղմի մեջ մնացած անաղտ և հստակ ոսկի դահեկանի նման, գարշահոտություն-

[1] Նկատի ունեն Հիսուս Քրիստոսի «Բարի սամարացին» առակի հերոսին։
[2] Նկատի ունեն հողեղեն մարդուն։
[3] Բնագրում՝ յանկուցիչ։

ների մեջ պայծառ մնալով արևի լույսի նման, իբրև արեգակի լույս՝ իրենց բարիքները տալով ուրիշներին և ուրիշների պղծություններից չսովորելով, ինչպես արեգակը ուրիշների պղծությունից չի վերցնում։

Արդ, դուք, պատվական եղբայրներ, այսպիսի օրենքներով զարդարեցե՛ք ձեր անձերը և ամուր պարսպի պես եղեք միմյանց նկատմամբ։ Ինչպես որ քարերի բազմությունը մի տեղ հավաքվելով քաղաքի ամրության և պահպանության պարիսպ է, նույնպես և դուք, իբրև կենդանի քարեր, Աստծո սիրով միացած, անառիկ ամրությամբ հաստատուն մնացե՛ք։ Եվ ինչպես դրախտը բազմաթիվ տնկիներով է զարդարված, այնպես և դուք Աստծո դրախտի նման եղե՛ք՝ զարդարված քաղցրաճաշակ մրգերով և անուշահոտ ծաղիկներով լիքը բուրաստանի նման։ Եվ ինչպես թագավորի թագը սարքվում է ոսկուց, մարգարտից և թանկարժեք քարերից, նույնպես և դուք Քրիստոսի գլխի պարծանքների թագ եղե՛ք, և ձեզանից ամեն մեկը իր գեղեցիկ գործերով թող փայլի լուսատու աչքի նման։ Եվ ինչպես թանկարժեք քարերը ոսկու վրա շարվելով են միանում իրար, նույնպես և դուք անբիծ հավատով և իրար պատշաճող անկեղծ սիրով գեղեցիկ և պայծառ լույսով փայլեցե՛ք, ձեր մայրն եղող Եկեղեցու համար դարձե՛ք կենդանի գանձ և պարծելի որդիներ. ուտելիս և խմելիս՝ ամեն բան Աստծո փառքի համար կատարեցե՛ք։

Արդ, ով սիրի այս եղբայրությունը և մտնի նրա միաբանության մեջ, պետք է պահի այս օրենքները և եղբայրների հիմնադրույթները, նա պետք է միաբանվելու մասին գրություն գրի և նրա համար Քրիստոսը կյանքի համար գիր կգրի։ Շնացողը, հայհոյողը և այլ զանազան մեղքերով վարվողը չի՛ կարող գրով այստեղ լինել, իսկ ովքեր օրինապահ են՝ իրար կշահեն սիրով։ Ավագ եղբայրը քաղցրությամբ թող խրատի, իսկ կրտսերը հնազանդությամբ լսի, ով գիտուն է՝ թող չհպարտանա, իսկ ով անգետ է՝ թող չհուսահատի, այլ իբրև Քրիստոսի անդամներ պետք է միմյանց խնամք տանեն, մեծին և իմաստունին պատվեն և փոքրին ու անուսին գութով խրատ տան։

Տասը հոգու գլխավորը և քառասուն հոգու մեծավորը ամեն ժամ պետք է ուսուցիչներից սովորեն, ուրիշներին աջակից լինեն և ամեն բան բարի խրատով հիմնավոր կերպով կատարեն։

Հավելված 3

«Արհեստավորների մասին»

(18-րդ դ. հայկական համքարությունների կանոնադրություն, Վ.Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում, Երևան, 1971, էջ 253-258)

1. Ամեն արհեստավոր պարտավոր է ամբողջապես հմտանալ և վարժ լինել իր ուսանելիք արհեստում և ապա այն ազատորեն գործածել ուրիշների համար։ Իսկ եթե որևէ մեկը առանց կատարելապես վարժ լինելու արհեստ մտնի և ինքն իրեն ներկայացնի որպես արհեստից տեղյակ անձի և իր անտեղյակության պատճառով վնաս պատճառի ուրիշներին, երբ դա հայտնաբերվի և քննությամբ ստուգվի, որքան վնաս է հասցրել՝ պետք է լիովին վճարի և նրան պետք է արգելվի արհեստը գործածել մինչև նույն արհեստը կատարելապես չսովորի և կատարելապես տեղյակ չլինի նրանից։

2. Բոլոր արհեստավորների համար կանոն է ուստաբաշի[1] ընտրել և այդ մասին հայտնել հայոց դատարանին, որպեսզի վերջինս տեղյակ լինի ու նրան երդվեցնել տա։

3. Ինչպես որ հոգևորական աստիճան ունեցող անձերի համար կանոն է ուղիղ կառավարելու համար երդում տալը, նմանապես մարմնավոր կառավարիչների, մասնավորաբար արհեստավորների ստարշինայի[2] և ուստաբաշու համար նույն բանը կանոն է։

4. Երդում տվողների երդման մի օրինակ. Հանուն Ամենամեծ Աստծո, ես՝ ներքոանվանյալս, Ամենակարող Աստծո և Նրա սուրբ խաչի և Ավետարանի առաջ խոստանում եմ, որ ցանկանում եմ և պարտավորվում եմ իմ մաքուր խղճմտանքով ինձ հանձնված պարտավորությունը կատարել՝ դա անելով ճշմարտությամբ և աներկյուղ արդարությամբ՝ որքանով որ թույլ կտան իմ կարողությունն ու զորությունը՝ որպեսզի ամբողջովին և հոժարությամբ հետևեմ արհեստի կացության բարեկարգ վիճակին, արհեստիս բարգավաճմանը, բարեկարգմանը, անհամաձայն արհեստավորներին պատասխանելով և չթույլատրելով չարագործություն կամ արհեստավորների կանոնադրության չկատարում։ Իսկ եթե այլ կերպ վարվեմ, ապա այս մեկ կյանքում ինձ օրինավոր դատապարտության կենթարկեմ և հանդերձյալում Աստծո և Նրա սարսափելի դատաստանի առաջ պատասխան և հաշիվ տալու դատապարտության կենթարկվեմ։ Որպես այս երդման եզրակացություն՝ համբուրում եմ իմ Փրկչի Խաչն ու Ավետարանը, ամեն։

5. Եթե արհեստավորների միջև մինչև երկու թումանի վեճ առաջանա, ապա չպետք է դատաստան խնդրել, այլ՝ ինչ որ ուստաբաշին վճռի՝ դա էլ պետք է անել։ Իսկ եթե վեճի գումարը ավելի մեծ է, ապա օրինական կարգով կարելի է դատաստան խնդրել և դատավորը նրանց կուղարկի նույն արհեստից եղող մուսուֆների[3] մոտ, որպեսզի նրանք վճռեն։

---

[1] Բառացիորեն՝ արհեստավորների գլուխ (թուրքերեն)։

[2] Մեծավոր (ռուսերեն)։

[3] Արդարամիտ և հեղինակավոր անձինք։

6. Բոլոր արհեստավորները, իրենց արհեստը գործածելու ժամանակ, արհեստին առնչվող կառավարման, կշռի, չափի, հարգի կամ գործի հարցերում պարտավոր են դրանք գործածել ստարշինային տեղյակ պահելուց հետո։

7. Եթե որևէ մեկը գանգատվի բարձր գին դնելուց, այդ ժամանակ ուստաբաշիները պետք է Աստծո առաջ ճշմարտությամբ գին դնեն և վճռեն։

8. Բոլոր արհեստավորներին, վարպետներին և մասնավորաբար խալֆաներին[1] արգելված է աշկերտների չարության կամ հիմարության համար նրանց անպայման ծեծել կամ վատությամբ վարվել նրանց հետ։ Եթե որևէ մեկը համարձակվի այդպես վարվել, ապա նա պարտավոր է հատուցել՝ հասարակ չքավորների օգտին տուգանքներ վճարելով։ Նմանապես, աշկերտը պարտավոր է հնազանդ և իր աշխատանքին ուշադիր լինել։

9. Եթե որևէ արհեստավոր ցանկանա մի այլ քաղաքում բնակվել, ապա նույն տարվա հարկը պետք է վճարի և գնա, իսկ եթե մի ուրիշ քաղաքից է եկել և բնակվել, ապա նրանից չպետք է նույն տարվա հարկը պահանջել։ Իսկ եթե մի վաճառական սովոր է գալ և գնալ՝ պարտավոր չէ տարեկան հարկը վճարել, այլ՝ անցյալի հարկը միայն։

10. Եթե որևէ արհեստավոր իր արհեստը կիրառելու ժամանակ իր բոլոր պարտավորությունները կատարելով աղքատանա կամ խելագարվի, նրան հարկավոր է օգնել, նմանապես՝ եթե մահանա, հարկավոր է նրան թաղել, իսկ եթե հիվանդն առողջանա և փող շահի, ապա փոխ տրվածը վերցնելու է նրանից առանց շահի։ Եթե արհեստավորները աղքատ լինեն և հայտնեն ինը անձերի, նրանց հասարակ չքավորների փողից պետք է տալ։

11. Եթե որևէ աշկերտ արժանի է վարպետության կամ խալֆայության, հարկավոր է նույն արհեստի վարպետներին հավաքել և քննել։ Եթե նա արժանի է՝ նրան գրավոր վկայական է տրվում, իսկ եթե արժանի չէ՝ ծառայում է նույն արհեստին։

12. Եթե որևէ վարպետ չի ցանկանում գրավոր վկայական տալ կամ ցանկանում է ավելի աշխատեցնել, այդ դեպքում խալֆաների կողմից կարգված խալֆայից պետք է խնդրել։ Եթե նա չտա, այդ մասին պետք է հայտնել դատարանին։

13. Երբ աշկերտը խալֆա դառնա, վարպետի հետ հարկավոր է վարձատրման մասին պայմանագիր կազմել՝ նշելով, թե որքան ժամանակ է պարտավոր նրա մոտ մնալ։ Եթե վարձատրությունը ժամանակին չհատուցի կամ խալֆան ճիշտ գործ չկատարի և գանգատ լինի՝ նա տուգանքներ պետք է հատուցի։

14. Եթե որևէ մեկը փողերի մասին ասի, թե մի մարդ դրանք անուղիղ ճանապարհով է վաստակել, նա կես տուգանք պետք է վճարի։ Պատճառն այն է, որ եթե նա ճիշտ էր, ապա հարկավոր էր այդ մասին հայտնել կառավարիչ ուստաբաշուն կամ դատարանին։

15. Եթե որևէ արհեստավոր ուրիշներից գործ վերցնի և այն փոխի, կամ այն հետ տա թույլ սարքված, կամ քաշը նվազեցնի, կամ չափը ճիշտ չլինի, կամ վատ ձևի, կամ այլևայլ հնարներով ու խաբեությամբ իր մոտ պահի առանց տվյալ առարկայի տիրոջ թույլտվության, և նա դրա համար գանգատվի, ապա հարկավոր է

[1] Արհեստի մեջ հմտացած աշխատող, որը միջանկյալ դիրք է գրավում աշկերտների և վարպետների միջև։

երկու վարպետ տեսնել։ Եթե անուղղությունը հաստատվի, ապա վնասի կրկնակին պետք է առնեն։

16. Աշկերտն ու խալֆան վարպետի տանը իրենք իրենց պետք է համեստությամբ պահեն։ Իսկ եթե նրա կնոջ նկատմամբ արգելված վարք և ընթացք ցուցաբերեն ու վարպետն այդ մասին կառավարությանը գանգատվի, այդ դեպքում հարկավոր է հրապարակայնորեն խայտառակել նրանց և հինգ ամիս գժանոց կամ վեց ամիս քարակրության ուղարկել։

17. Եթե արհեստավորները երկրորդ ընտրությամբ ուստաբաշի են ընտրել և նա իր գործերը բարվոք կերպով է կառավարել, ապա այդպիսին պատվելի անձ պետք է անվանվի։

18. Եթե արհեստավորները, օրինակ՝ պատկերահանները, ճարտարապետները, քանդակագործները, երգահանները, բժիշկները, ճիշտ են սովորել և ուրիշների վկայությամբ՝ փորձառու են, նրանց պատվական անձեր պետք է անվանել։ Նրանց մեղանչության դեպքում պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են երևելի վաճառականների դեպքում՝ ինչպես դա օրենքով սահմանված է։

19. Եթե մեկը նավ կառուցի և նրա մեջ ուրիշների իրերը դնի, որպեսզի դրանք այլ վայր տանի և այնտեղ տա նրանց, ում իրերի տերերն են հրահանգել, և պատահի, որ նավում որոշ իրեր թրջվեն, ապա թրջված իրերի ամբողջական վնասը պետք է վճարվի։ Սրա պատճառն այն է, որ նա պարտավոր էր զգույշ լինել ուրիշների իրերն իր մոտ պահելու ողջ ընթացքում։ Եվ որովհետև զգուշություն ձեռք չի առել, ապա նա, որպես պատիժ իր զանցառության, պետք է վնասը կրի, որպեսզի հետագայում զգաստ լինի։

20. Եթե ծովում բազմաթիվ օրեր ալեկոծություն լինի և ալիքների ջրերը նավի վրա ելնեն և պատճառ լինեն նավում գտնվող իրերի թրջվելուն, այսպիսի դեպքում նավատերը պարտավոր չէ թրջվելու վնասը իրերի տիրոջը վճարել։

21. Եթե ծովի ալեկոծության ժամանակ տղամարդիկ փախչեն իրենց անձերի փրկության համար և իրենց ինչքերից մի շարք իրեր ծովը թափվեն և իրենք խաղաղությամբ փրկվեն և նավահանգիստ հասնեն, այսպիսի դեպքում, ծովը թափված իրերի գինը պարտավոր են բաժին-բաժին հատուցել բոլոր վաճառականները՝ ըստ իրենց ապրանքների և ինչքերի քանակի։ Օրինավոր չէ, որ մեկն ամբողջովին վնասվի, իսկ մյուսի ինչքն ամբողջությամբ փրկվի, այլ պարտավոր են բոլորը, ըստ իրենց ապրանքների և ինչքերի քանակի, վնասները կրել։

22. Եթե թանկարժեք քարեր տաշողը մեկից աղամանդ կամ սուտակ կամ մեկ այլ թանկարժեք քար վերցնի տաշելու համար և պատահի, որ տաշելու ժամանակ այն կոտրի կամ չտաշի ըստ իր պայմանավորվածության, այդպիսի դեպքում պարտավոր են վնասը նրա տիրոջը վճարել։

23. Եթե ոսկերիչը մեկից արծաթ կամ ոսկի առնի նրա համար ինչ-որ բան սարքելու նպատակով և սարքելու ժամանակ ոսկուց կամ արծաթից գողանա և գողացվածի փոխարեն նրանց մեջ խառնի պղինձ կամ այլ հրահալելի նյութեր, երբ դա հայտնաբերվի և քննությամբ ստուգվի, ապա նա հայտնի գող է համարվելու և նրա հետ վարվելու են այնպես, ինչպես կվարվեին հայտնի գողի հետ՝ առանց որևէ բացառության։

24. Եթե որևէ մեկը ոսկերչին արծաթ կամ ոսկի տա՝ ինչ-որ իր սարքել տալու համար, կամ դերձակին կերպաս տա հագուստ կարել տալու համար, և պատահի, որ ոսկերչի կամ դերձակի խանութը այրվի և նա չկարողանա ազատել նրա արծաթը կամ ոսկին կամ կերպասը, այդպիսի դեպքում ոսկերիչը կամ դերձակը պարտավոր չեն վնասը վճարել։ Իսկ եթե ազատած լինի, սակայն իրը ցույց չտա՝ ասելով, թե այրված է կամ կորած, այդ դեպքում, երբ հայտնաբերվի և քննությամբ ստուգվի, ապա հայտնի գողերի պատիժը կկրի։ Իսկ եթե ոսկերչի կամ դերձակի խանութից ոսկի և արծաթ կամ կերպաս գողացվի, ապա ոսկերիչն ու դերձակը պարտավոր են վնասը կրել և գինը տալ նրա տիրոջը։ Այսպես պետք է վարվել նաև նման բոլոր պատահարների դեպքում։

25. Եթե դեղավաճառը, որը պարսիկների լեզվով կոչվում է աղդար, մի դեղի փոխարեն վաճառի մեկ այլ դեղ, որը հիվանդի ցավերի սաստկացման կամ մահվան պատճառ լինի, հարկավոր է այդ մասին տեղեկացնել դատավորներին։ Եթե նա դա արած լինի գիտակցաբար և չարությունից մղված, ապա ըստ օրենքների պետք է պատիժ կրի ըստ իր մեղքերի քանակության, իսկ եթե կատարել է անգիտակցաբար կամ առանց չարակամության, ապա նրա հետ պետք է վարվել ըստ գրվածի։

26. Եթե որևէ մեկը ցիքութա կամ այլ թունավոր միջատ վաճառի, կամ այնպիսի բան, որը կանոնով արգելված է[1]։

27. Եթե որևէ մեկը վաճառի մի դեղ և անտեղյակ է, թե այն վնաս, նույնիսկ մահ կարող է պատճառել, ապա եթե փորձառու չէ, չպետք է դեղ վաճառի։ Նաև չի կարող ըստ իր կամքի ծախել, այլ պարտավոր է կանոններին և իր խղճմտանքին հետևել։ Իսկ եթե հին դեղը նորի փոխարեն տա, ինչն անօրենություն է, ապա մեծ պատժով տուգանքներ պետք է հատուցի։

28. Բոլոր արհեստավորները երբ ուրիշներից ինչ-որ իր ընդունեն՝ ինչ-որ բան սարքելու համար և ըստ իրենց պայմանավորվածության չսարքեն, ապա պարտավոր են վնասը կրել։ Օրինակ, եթե երկայնահասակ մի մարդ մի դերձակի կերպաս տա իր համար հագուստ կարելու համար և դերձակը հագուստը կարի ոչ նրա հասակի երկարության չափով, այլ՝ կարճ և հագուստը այդ տղամարդուն պետքական չլինի, այդպիսի դեպքում՝ չկարված հագուստը դերձակը պարտավոր է առնել և կերպասի գինն ու այլ ծախսերը վճարել նրա տիրոջը։ Այսպես պետք է վարվել նաև նման բոլոր դեպքերում։

29. Բժիշկը պարտավոր է զգույշ լինել։ Եթե իր արհեստում հմուտ չէ, ապա նա հանցավոր է։ Նա հանցավոր է նկատվում, եթե դեղն ու օշարակը չի տալիս ըստ դրանց նշանակության և ըստ արհեստի ավանդության, առավել ևս, եթե տալիս է հակառակ խոհեմության և իրավանց դեմ։ Եթե հիվանդի պահպանության նկատմամբ պատշաճ զգուշություն չցուցաբերի, հանցավոր է նկատվում։ Նա պետք է զգույշ լինի, մինչև հիվանդության վտանգն անցնի։

30. Բժիշկը պարտավոր է հիվանդին տեսնել և ամենատարբեր կերպ նրան օգնել ինչպես դեղերով, այնպես էլ վնասակար ուտելիքներից և ըմպելիքներից զգուշացնելով։

[1] Բնագրում նախադասությունն այսպես կիսատ է։

31. Երբ բժիշկը հիվանդին տեսնի, ծանր պարտականություն ունի նրան հորդորելու, որ խոստովանի և հաղորդություն ընդունի, որից հետո պետք է օգնել դեղերով, քանի որ հոգին մարմնից առավել կարևոր է։

32. Հոգևոր բժիշկները կարող են դեղ տալ։ Հոգու բժշկի նման, մարմնի բժիշկն էլ հույժ բարի պետք է լինի։ Սակայն անդամահատելը պատարագիչների գործը չէ, այլ աշխարհական անձերի։ Եթե հիվանդը հույժ պետքական մի անձ է և մեկ այլ բժիշկ գտնելն անհնար է և եթե անդամահատությամբ հիվանդը առողջություն է գտնելու, ապա հոգևորականը կարող է դա անել։

33. Սափրիչն իրավունք չունի առանց բժշկի հրամանի արյուն վերցնել հիվանդներից և ցավագարներից, թեպետ նա պարտավոր չէ արյուն առնել նաև առողջ անձերից՝ նույնիսկ նրանց խնդրանքի դեպքում։ Սակայն քանի որ մեզ մոտ ոմանք այդպիսի սովորություն ունեն, ապա նման բանը թույլատրելի է։

34. Իսկ հիվանդների դեպքում սափրիչներին ամբողջովին արգելված է արյուն առնել առանց բժիշկների հրամանի։ Իսկ եթե սափրիչը հանդգնի այս կանոնների դեմ շարժվել, խստորեն պատժվելու է առանց որևէ գթության և նրան արգելվելու է արհեստի որևէ կերպ գործածումը իր կյանքի բոլոր օրերում։

35. Եթե որևէ մեկը ուրիշներին կերպաս, կամ հագուստ, կամ անոթ, կամ որևէ այլ բան տա վաճառքի համար և պատահի, որ վաճառքի համար իրը վերցրած անձը այն կորցնի, իրը վերցնողը պարտավոր է կորցրածի գինը վճարել նրա տիրոջը՝ առանց բացառության։ Իսկ եթե հրդեհ ընկնի և վաճառողի տունը հրակեզ լինի կամ նրա տնից գողացվի, այդ դեպքում ապրանքներ վաճառողը գրավոր կերպով պետք է հավաստի, որ իրը այրված է կամ գողի կողմից տարված։ Նման դեպքում վաճառողը պարտավոր չէ իրի գինը վճարել նրա տիրոջը։

36. Եթե մեկը ուրիշներին տա մի իր, որպեսզի այն դնի վաճառականների խանութում և իր փոխարեն վաճառի, և պատահի, որ իրը վնասվի կամ կորսվի, ապա վերևում հիշված ձևով պետք է վարվել։

37. Եթե որևէ մեկը բաղնիք գնա և հագուստներից մերկանալով հագուստները թողնի բաղնիքի դռան մոտ և ինքը ներս մտնի և այնտեղ չունենա սպասավոր, որն իր հագուստները պահի, այդպիսի դեպքում բաղնեպանը պարտավոր է հագուստներն իր մոտ պահել։ Եվ եթե պատահի, որ բաղնեպանի անուշադրության հետևանքով հագուստները կորեն կամ գողացվեն, ապա բաղնեպանը պարտավոր է կորցրածի կամ գողացվածի գինը վճարել։

38. Իսկ եթե այդ տղամարդը իր հագուստները կորսվելուց կամ գողացվելուց պահպանող սպասավոր ունի, ապա բաղնեպանը պարտավոր չէ վնասը վճարել. քանի որ թե՛ ինքը և թե՛ իր սպասավորները իսկապես տեղյակ չեն եղել գողությունից և ո՛չ էլ իրենք են գողացել։ Բայց եթե հայտնաբերվի, որ հագուստները գողացողները նույն ինքն բաղնեպանը կամ նրա սպասավորներն են, այդպիսի դեպքում նրանց հետ պետք է վարվել այն օրենքներով, որոնք կիրառվում են աներևույթ գողերին պատժելու և տուգանելու դեպքում՝ առանց բացառության։

39. Եթե որևէ մեկը ուղիղ և հասարակական նորմերի դեմ սկսի շարժվել՝ շռայլաբար վատնելով իր ունեցվածքը և անկարգ կերպով մսխելով այն, պետք է այդպես անկարգ կերպով շարժվող տղամարդու մասին տեղեկացնել դատավորնե-

րին, որպեսզի նրանից բռնախլվի նրա ունեցվածքը և հոգաբարձու կարգվի՝ նրա ունեցվածքը կառավարելու, ինչպես և այդ տղամարդուն, նմանապես և նրա որդիներին ու ընտանիքին չափավոր հատկացումներ անելու համար, մինչև այդ տղամարդը զղջա կամ նրա որդին չափահաս դառնա։ Իսկ եթե իր ունեցվածքը վատնող տղամարդը չափահաս որդի ունի, ապա կարելի է նրան հանձնել այդ ունեցվածքի կառավարումը և ուրիշին հոգաբարձու չկարգել։ Սակայն չափահաս որդին պարտավոր է իրեն հանձնվածը կառավարել ըստ օրենքների և կատարել հոգաբարձուի պարտավորությունները՝ բացառությամբ հոգաբարձուների համար սահմանված վարձատրության՝ առանց որևէ բացառության։

40. Եթե որևէ մեկը հիվանդանա մոլորեցնող հիվանդություններով՝ ինչպես հիմարությամբ, գինեմոլությամբ, շնությամբ, ծուլությամբ և սրանց նմաններով, որով և չցանկանա ապրել բանական մարդկանց կենցաղավարության նորմերով, այլ՝ իր ախտին հետևելով իր ունեցվածքն սկսի վատնել անկարգ կերպով, այդպիսի վատ տղամարդուն պետք է պատժել ըստ ընդունված կարգի, այնպես, ինչպես ներքևում գրված է։ Նախ, եթե հիմարացած է և, ենթադրաբար, բանականությունը կորցրած, պետք է նրան շղթայակապ պահել և երբեմն-երբեմն ձաղկել՝ զգաստացնելու համար։ Երկրորդ, եթե որևէ մեկը հարբեցողության է հետևում, պետք է նրան շղթայակապ պահել բանտում և միայն հացով և ջրով կերակրել, մինչև զղջա և հավաստիք տալով հանձնառու լինի ուրիշ անգամ օղի կամ հարբեցնող այլ բան չխմել։ Երրորդ, եթե որևէ մեկը շնության է հետևում՝ պետք է պատժվի ըստ ընդունված կարգի։ Չորրորդ, եթե որևէ մեկը ծուլությամբ է ախտահարված և ինչ ունի՝ մսխում է և չի ցանկանում աշխատել ապագայի համար, պետք է նրան խիստ ծառայությամբ աշխատանք տալ։ Այլ մեղավորներին էլ պետք է պատժել ըստ իրենց հանցանքների՝ առանց որևէ բացառության։ Այս բոլորից բացի, այսպիսի տղամարդկանց ունեցվածքի վրա դատավորները պետք է հոգաբարձու կարգեն կամ նրանց չափահաս որդիներին նշանակեն նրանց ունեցվածքը կառավարելու համար՝ ըստ վերևը հիշատակված համար 92 գրվածքի խրատի[1]։

41. Եթե որևէ մեկը կրակ գցի ուրիշների դաշտում կամ անդաստանում և դաշտի կամ անդաստանի բույսերն այրի, նա վճարելու է այրածների գնի կրկնապատիկը՝ առանց բացառության։

42. Եթե որևէ մեկը բռնությամբ տիրի ուրիշի անդաստանին կամ հողամասին առանց օրինավոր պատճառների, և երբ դա հայտնաբերվի և քննությամբ ստուգվի, անդաստանը կամ հողամասը իր սեփականատիրոջն է տրվելու։ Իսկ նա, ով բռնությամբ տիրացել էր հողամասին կամ անդաստանին, նա ո՛չ միայն վճարելու է քառապատիկը հողամասի կամ անդաստանի սեփականատիրոջը հասցրած վնասի, այլև իր հանդգնության համար հրապարակայնորեն պետք է պատժվի։

43. Եթե որևէ մեկը ուրիշների հողամասում սերմ ցանի կամ ծառ տնկի, կամ աշխատի դրա վրա՝ միամտաբար կարծելով, թե հողամասը տեր չունի, այդպիսի դեպքում հողամասի տերը կարող է երեք տարվա ընթացքում տիրել հողամասին՝ առանց որևէ բան տալու երկրագործի ցանած բույսերի համար։ Իսկ եթե երեք տարի անցնի և հողամասի տերը չխոսի օտար երկրագործին, երկրագործն այնու-

[1] Բնագրում 92-րդ համարը գոյություն չունի։

հետև կտիրի նրա հողամասին և ոչինչ չի տա հողամասի տիրոջը։

44. Եթե որևէ մեկը իր գրաստը մտցնի օտարի այգին, անդաստանը կամ պարտեզը, որպեսզի այնտեղ ճարակի առանց նրա թույլտվության և հավանության, և երբ դա հայտնաբերվի և քննությամբ ստուգվի, նրա նկատմամբ պետք է վարվել հայտնի գողերին պատժելու և տուգանելու օրենքներով՝ առանց ողորմության։

45. Եթե որևէ մեկի գրաստը ինքը մտած լինի ուրիշի այգին, անդաստանը, դաշտը կամ պարտեզը և այնտեղի բույսերից ճարակի, սակայն գրաստի տերը դրանից տեղյակ չլինի, այդպիսի դեպքում գրաստի տերը պարտավոր է այգու, անդաստանի կամ պարտեզի տիրոջը լիովին վճարել գրաստի հասցրած վնասը՝ առանց բացառության։

46. Եթե որևէ մեկը իր գրաստը թողնի պանդոկում և հանձնի պանդոկապանին, որպեսզի նրանց կերակրի, և եթե պատահի, որ ավարառուներն ասպատակեն պանդոկը և իրենց հետ այդ տղամարդու գրաստը տանեն, այդպիսի դեպքում պանդոկապետը պարտավոր չէ գրաստի տիրոջ կրած վնասը հատուցել։

47. Եթե որևէ մեկը իր գրաստը հանձնի ուրիշներին և նրան վարձ տա, որպեսզի նրանց արածեցնի, բայց նա կորցնի նրանցից, ապա պարտավոր է վնասը վճարել։ Իսկ եթե սատկեն կամ ավարառուների կողմից առևանգվեն, նա վնասը հատուցելու պարտավոր չէ։

48. Եթե եղջերավոր անասունն ու ցուլը իրենց բնության համաձայն միմյանց դեմ մարտնչեն և պատահի, որ մեկը մյուսին սպանի, եթե սպանվածը ճակատամարտելու նախահարձակն է, ապա կենդանու տերը պարտավոր չէ վնասը վճարել։ Իսկ եթե սպանվածը նախահարձակի հետևից գնացածն է, ապա այդ դեպքում կենդանու տերը պարտավոր է սպանվածի գինը նրա տիրոջը վճարել։ Այսպես պետք է դատել նաև բոլոր կենդանիների համար, ինչպես առյուծը, կովը և նրանց նմանները։